

**Տ. ԱՐԵՎԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝  
ԽՈՍՎԱԾ Ս. ԷՇՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱԾԱՐՈՒՄ  
ԴԱՏԱՎՈՐԻ ԿԻՐԱԿԻԻՆ ՄԱՏՈՒՅՎԱԾ  
Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

(6 մարտի 2005 թ.)

**«Որդի Մարդոյ եկեւալ՝ գլուխից» արդիօք  
հասալու յերկրի»:**

**«Արդյոք երբ մարդու Որդին գա, երկրի  
վրա հավատքը կզունի»:**

(Դոկ. ԺՀ 8)

**«Յանուն Նօր և Որդոյ և Նոգոյն Սրբոյ. ամէն»:**

Ահա, սիրելի հավաքացյաներ, այս հարցն է հնչում այսօրվա Ս. Պատարագի Սուրբ-գրային ընթերցվածի վերջում, քանի որ Ս. Պատարագի ընթացքում այսօր ընթերցվում է Անիրավ դափավորի և այրի կնոջ առակը: Մեր հայրենն այս կիրակին Մեծի Պահոց կիրակիների շարքում անվանել են Դափավորի կիրակի: Ջրիսպոս այսպես խոսում է մի այրի կնոջ մասին: Կին, որ կորցրել էր իր ամուսնուն և իր այրիացյալ լինելու պարճառով չափացանց խոցելի էր մյուսների կողմից իր անպաշտպանվածությամբ, որի համար էլ չէր կարողանում պաշտպանել իր իրավունքները: Նա մոփենում է քաղաքի դափավորին, որը հայրնի էր իր խսքարսրությամբ, հայրնի էր մարդկանցից չամաչելու և Ասպծուց չերկնչելու իր դիմությանը համբավով:

Դափավորից մի քանի անգամներ ակնկալելով իր արդար իրավունքի վերականգնումը, ոչ մի արդյունքի չի հասնում այրի կինը և սակայն, հակառակ ամեն անգամ անօրէն դափավորի կողմից դրսորդված անփարքերության, դրսորած անհաղորդության իր հանդեպ, կինը անընդհափարար, շարունակաբար դիմում է դափավորին՝ չկորցնելով երեք լավագետությունը, որ իր հայցը վերջիվերջո արդարութեն պիտի քննվի, և ահա, վերջապես, դափավորը անդրադառնում է այդ հարցին: Անդրադառնում է ոչ այնքան հաղորդ դառնալով կնոջ կարիքներին, այլ հարկապես սեփական հանգստությունը վերստին գինելու ցանկությամբ, որպեսզի կինը անընդհափարար չանհանգստացնի իրեն, և մրգածում է, որ թերևն լուծում դրա կնոջ խնդրանքին, որպեսզի այլևս նման անհանգստություն չպատճառվի իրեն, չնայած որ այդ սփիպողությունը իրեն ոչ մարդկանցից ունեցած ամոթից էր և ոչ էլ Ասպծուց ունեցած երկյուղից:

Վկայակոչելով այս այրի կնոջ հերքսողականությունը և անձանձրույթ դիմելը, Ջրիսպոս կափարում է հեփկայլ ընդհանրացումը: Եթե անիրավ դափավորը, որ մարդկանցից ամոթ չունի և Ասպծուց էլ երկյուղ չունի, ահա այսպիսի մոդեցում դրսություն, և վերջիվերջո, անկախ խնդիրը լուծելու շարժառիթից, լուծման արժանացրեց այրի կնոջ խնդրանքը, ապա

որքան ևս արդար դաշտավորը, երկնավոր դաշտավորը պատրաստ պիտի լինի ընդառաջել մեր խնդրանքներին, ընթացք փառ մեր խնդրանքներին: Այս ընդհանրացումից հետո սակայն Քրիստոս Վերջում հարց է ուղղում իրեն շրջապատճեներին. «Սակայն արդյոք Մարդու Որդին եքք գա, այդքան հավաքք, այդքան հետևողականություն, այդքան սեփական խնդրանքները փեղ հասցնելու համոզվածություն պիտի գրնի՞ մարդկանց մեջ, արդյո՞ք այդ հավաքքը պիտի շարունակի ապրել մարդկանց մեջ, այնպես, ինչպես որ ուներ այրի կինը»:

Ահա այս է այն հարցը, որի պատրասխանը դժվար է փալ: Եվ սակայն ամերաբառնալով առակին, որպեսզի նրա գաղափարը առավել արժեցվի մեր մեջ, պերք է կափարել մի քանի ընդգծումներ, առանձնացնել մեզ համար ուսանելի մի քանի դրվագներ, մի քանի հարվածներ: Ինչո՞ւ համար այրի կնոջ խնդրանքները լուծում գրան, չէ՞ որ նա չուներ այնպիսի միջոցներ, որոնցով պարուադրանքի ներթակեր դաշտավորին: Եվ ահա Քրիստոս փախի է այս հարցի բացարության բանալին: Նախ՝ այրի կինը չափազանց համոզվածություն ուներ, որ իր դիմումը անպայմանորեն պետք է լուծվի. այսինքն՝ առաջինը սեփական իրավունքները վերականգնելու նկարմամբ անսահման հավաքք: Իսկ ինչ է հավաքքը, եթե ոչ այն, որ արդարությունը կարող է վերականգնվել հակառակ զոյություն ունեցող առարկայական այն բոլոր դժվարությունների, որոնք նույնիսկ մեր ուժերից վեր են թվում հաղթահարել մեզ:

Իրապես, Պողոս առաքյալը հավաքքը ձևակերպում է որպես հուսացված բաների ամբողջություն (չին Եք. ԾԱ 1), բայց հավաքքը ունի մենի այլ կողմ ևս, համաձայն որի մենք հավաքում ենք հակառակ նաև երբեմն ամեն անհուսության: Որևէ աշխարհային երևույթ, որևէ իրականություն չի կարող մեզ հոռեթեսություն ներշնչել, չի կարող մեզ փարիսամոզել, որ մեր խնդրանքը, մեր խնդիրը չի կարող լուծվել, եթե մենք իրապես հավաքացած ենք այդ խնդրի լուծմանը: Ուրեմն առաջին հարկանիշը, որ դրսնորեց այրի կինը, անսահման հավաքքը էր իր խնդրի լուծման նկարմամբ, և սակայն մեր հավաքքը, քրիստոնյաներիս հավաքքը նաև ենթադրում է, պարզադրում է որոշակի բարոյական և վարչագօնային նորմեր:

Հավաքքը մեզ պարտադրում է որոշակի բարոյական կաղապարներ, որոշակի բարոյական հասկացություններ, որոշակի միջոցներ, որոնցով կարող ենք հասնել մեր նպարակին, և ահա այդ միջոցների մասին խոսելու վերաբին անդրադառնում ենք այրի կնոջը: Ի՞նչո՞ւ նա օգբագործեց որպես միջոց: Որպես միջոց օգբագործեց խոնարհությունը: Եվ ի՞նչ է խոնարհությունը: Խոնարհությունը սեփական արժանիքների գիբակցումի հետ նաև սեփական անձի բացարձակեցումից հրաժարվելն է: Անձը գիտի, որ ունի արժանիքներ, ունի շնորհ, կոչված է կրելու Ասքծոն պարկերը, բայց նաև դա համար ամբարդավանության, սեփական անձը բացարձակացնելու, ասդաշտացնելու առիթ և պարբռած չէ:

Այրի կինը գիբակցում էր իր արժեքը, գիտեր, որ անձ է, կրում է Ասքծոն պարկերը, Ասքծոն նմանողությունը, բայց հեռու էր այն մտքից, որ բացարձակ է, և չէր ամաչում, չէր երկընչում իր վեկարությունները մեջքելու բերել: Ինքը իրեն չէր ասդաշտացնում, չէր բացարձակացնում և նույնիսկ չէր խորշում իր խնդրանքի լուծման համար դիմել մի դաշտավորի, որը խսդասիրդ, անիրավ դաշտավորի համբավ ուներ:

Խոնարհ անձր իրապես երբեմ գործերություն չի դնում թե իր խնդրանքով դիմում է արդար անձի՝, թե՛ անարդար անձի: Իր համար էականը ոչ թե անձն է, այլ այն լավագետությունը, որ Աստված իրապես օգնելու է իրեն իր խնդրանքը մինչև վերջ ի կափար ածելու: Հաջորդ հարկանիշը, որ դրսնորեց այրի կինը, դա անսահման համբերությունն էր և հասդար փակամությունը: Մենք երենմ ունենում ենք հսկակ որոշած նպարակակետեր, ունենում ենք խոնարհություն, բայց մեզ շատ հաճախ պակասում է այդ հասդարակամությունը, համբերությունը, հետքողակամությունը:

Մեզ համար հսկակ է նպարակակետը, ունենք խոնարհությունը, ունենք պարասրակամությունը դռներ բախելու, սեփական անձր քացարձակացնելու, մեզնից դուրս այլ հեղինակություններ և ճամաչելու և հավլապես ճամաչելու, բայց երեսմ մեզ չի բավարարում մեր համբերությունը և հասդարակամությունը, որոնք սակայն ուղղակիորեն պայմանավորված են այն իրողություններով, թե մենք որքանով ենք համոզված մեր խնդրի լուծմանը: Եթե այդ համոզվածությունը մեր մեջ գործադր է, լուծմանը սպասելն ու հավագալը ևս կլինի գորավոր:

Ահա այս երեք հարկանիշները՝ համոզվածություն, խոնարհություն և հարավելություն, այս առակով ուսուցանում է մեզ Քրիստոս: Այս երեքը որպես հավագրի ամբողջություն պեսք է ունենանք յուրաքանչյուր՝ հասնելու համար այն բաղձայի նպարակակետին, որին մենք կոչված ենք որպես քրիստոնյաներ, որպես հավագայաներ:

Հիմա անդրադառնանք այն հարցին, որը Քրիստոս վերջում ուղղեց Իրեն շրջապատողներին՝ մեզ ամենքիս: Եթե Մարդու Որդին զա, կզբնի՝ այդքան հավագր, կզբնի՝ այդքան համոզվածություն, այդքան խոնարհություն, հավագրի այդքան հարավություն մեր մեջ, որպեսզի յուրաքանչյուր կարողանանք փրկվել: Անշուշտ հիմա մենք ևս կարող ենք խորհրդածել այս հարցի շուրջ:

Այսօր, երբ հաճախ դեմքնում ենք, որ շաբերն ինքնահշակ դարձավոր են կարծում իրենց և իրենցից դուրս դարձավոր չեն ճամաչում, երբ հաճախ մի գաճաճ ծառ մի ամրող անդառ է դարձում, երբ հաճախ մի քար մի սար է դարձում, երբ հաճախ մենք ինքներս մեզ քացարձակացնում ենք, մեզանից դուրս այլ հեղինակություններ չենք ճամաչում, երբ հաճախ ամեն ինչ առանցքում մենք ինքներս մեզ ենք դնում, այն ժամանակներում արդյոք Մարդու Որդին կզբնի՝ այդ հավագրը, կզբնի՝ այդ խոնարհությունը, կզբնի՝ այդ համոզվածությունը և կզբնի՝ այդ հարավությունը, որով մենք կարող կիխնենք փրկվել:

Դժվարանում եմ ասել՝ կզբնի, թե չի գտնի, բայց միարժեքորեն կարելի է ասել, թե միայն ինչ դեպքում և ինչ պարագաներում անձը կարող է իրեն փրկել: Կարող եմ ասել, քանի որ ամրող Սուրբ Գրոց հայքնությունը այդ մասին մեզ հուշում է, մեզ հուշարար է, անսպառ մի աղբյուր է այդ փրկությունը մեզ ավանդող: Սաղմոսներգուն ասում է, որ սուրբ սրբին և խոնարհ հոգուն Աստված երեք չի արհանարիում: Սրբի սրբությունը և հոգու խոնարհությունն են զրավական Աստվծո բարյացակամությանը, Աստվծո բարեհաճությանը արժանանալու:

Մարգարեն ասում է, որ իրենց քրիստոնքով շինված դրունը կարող են վասդակել միայն նրանք, ովքեր որ հավագարմություն ունեն, ովքեր որ խոնարհություն ունեն: Իրենց այցու պարուղ կարող են ուրեմն միայն նրանք, ովքեր որ իրապես խոնարհություն ունեն և հավա-

փարմություն ունեն: Պողոս առաքյալի ասում է, որ մեր ուժը, մեր զորությունը մեր վկարության մեջ է: Քավ լիցի, որ մարգարեն երբեմն քարոզեր վկարություն, բայց մարգարեի խոսքերը ուսուցանում են, որ մենք զորավոր ենք այն ժամանակ, երբ որ պատրաստ ենք մեր վկարությունները բացահայտել, երբ որ չենք երկնչում մեր թերությունները բացախռուելու, և Աստված իրապես վկարների հետ է, որի համար է Պողոս առաքյալը ասում. «Երբ վկարանում եմ, այն ժամանակ է, որ զորանում եմ»:

Ուստի միայն սեփական անձի վկարությունը մարդնանշելու, թերացումները մարդնանշելու ճանապարհով է, որ մենք կարող ենք իրապես հասնել այն բաղդայի նախարակակերպին, որին հասակ այրի կինը, հակառակ որ իր առջև կանգնած էր անսիրով և անհօդի և անարդար մի դադավոր: Եթե այս ղեղամիջոցները, այս ճանապարհները կարող են փափկացնել, կարող են խնդրի լուծում ապահովել անարդար դադավորների մոր, որևէմն որքան դրանք ցանկալի, արդյունավեր և զնդունելի միջոցներ են արդար դադավորների առջև: Իրապես, արդար դադավորը ծշրապես գրկարաց է մեր առջև, և մեզ միայն մնում է ընթանալ այն ճանապարհով, այն շավովով, որը Քրիստոս զծեց մեզ համար՝ հավաքրի, համովածության, խոնարհության և հարաբենության ճանապարհով ու շավով: Եվ թող Աստված զորացնի մեզ ամենին մեր այս շանքերի մեջ այս ճանապարհով ընթանալու, այժմ և հավիրյանս հավիրենից ամեն: